ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- 2024 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի «Ըստ գերատեսչական պատկանելության պետական գաղտնիքի շարքին դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին» N 53-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշման հավելվածում՝

ա. 6-7-րդ, 36-րդ, 44-47-րդ կետերում «ՀՀ ազգային անվտանգության ծառայություն» բառերից հետո լրացնել «ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն» բառերը,

բ. 13-րդ կետում «ՀՀ պաշտպանության նախարարություն» բառերից հետո լրացնել «ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն» բառերը,

գ. 23-րդ կետում «ՀՀ պետական պահպանության ծառայություն» բառերից հետո լրացնել «ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն» բառերը,

դ. 28-րդ կետում «ՀՀ քաղաքաշինության կոմիտե» բառերից հետո լրացնել «ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն» բառերը,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

2024 թ. նոյեմբեր --
Երևան